

չատոնց կը նախատեսնէին այդ խօլ ձեռնարկի ցաւազին վիճակը...

Եւ այդպէս համառուական Սորհրդային Միութեան ըլրճուկ դանձարանը կը պարպուի շարունակ ի նպաստ համաշխարհային յեղափոխութեան սին ծրագիրներու, մինչ մերկութիւնն ու անօթութիւնը կ'աղաղակեն Արխանգելսկէն մինչեւ Արաքսի եզերքը, մինչ Շիրակի ժողովուրդը կը գալարուի ազատի ճիրաններում եւ ամբողջ բնաշխարհի հայութիւնը կը անբայ տուրքերու բռնին տակ, կաշկանդուած, աւա՛ղ, իր աշխատանքի, իր արգասաւոր, ստեղծագործող ճիգերու մէջ...

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Երկու մեծ սպառնալիքներ են ծառայած այսօր միջազգային խաղաղութեան դէմ: Մէկը Սորհրդային Ռուսաստանի զոյուլթիւնն է: Միւսը պարտուած, բայց տակաւին վրէժխընդրութեամբ վառուած, պաշտօնապէս հանրապետական, իրապէս միապետական Գերմանիայի զոյուլթիւնը*):

Հզօր ոյժ է, անշուշտ, Գերմանիոյ ընկերվարական կուսակցութիւնը, որ ընդհանուր ընարութիւններուն կը հաւաքէ մէկ տասնեակ միլիոն քուէ, աւելի քան մէկ երրորդը ընդհանուր թուի: Սակայն, երբ կը բախին Հին ու նոր Գերմանիան, կոռուի հրապարակում գրեթէ մեն-մինակ կը յայտնուի ընկերվարական աշխատաւոր զանգուածը: Նա էր, որ բուն դիմադրութեամբ արդիւնց Վիլհէլմի վերադարձը Կապպի ծանօթ դաւադրութեան օրերում: (Հապչտապ, անկաղծակերպ ձեռ-

*) Կայ երրորդ սպառնալիքը, Փաշխտական Իտալիան, որու մասին կցկտուր գրած ենք «Հայրենիք» օրաթերթում: Փաշիզմի ժեսթերուն եւս հետեւելու ենք ուշադրութեամբ, եւս առաւել որ այդ նոր «աշխարհակալող» հոսանքը իր մեծագոյն սլաքն ուղղած է թիւրքիոյ դէմ եւ միւս կողմէն, չնայած հակոտնութեան օրէնքին, կը ձգտի եւ կը յաջողի դիւանագիտական լաւ յարաբերութիւններ մշակելու Սորհրդային Ռուսաստանի հետ... Անոր ապագային նիւթելիք հարուածները, կը յուսանք, վտանգ մը չեն հայ ժողովրդի շահերուն համար:

նարկ մըն էր այդ վերջինը): Ընկերվարական տարրերէն դուրս՝ բուրժուա ռամկավար հանրապետականներու թիւը շատ սահմանափակ է, տարաբախտաբար: Հինդենբուրգի ընտրութիւնը այդ իրողութեան ցցուն նշաններէն մէկն է:

Երկու մեծ ոյժերը, Ռուսաստան եւ Գերմանիա, կը պահեն աշխարհը անտոյգ, անհանգիստ, ջղայնացած վիճակում: Երկուքն ալ կը փնտռեն նոր բախտ ու արկածներ, իւրաքանչիւրը ուրեմն, տարբեր նպատակով: Բայց երկուքի միջեւ կայ խորունկ համերաշխութիւն մը: Վասնզի երկուքն ալ ունին ընդհանուր թշնամի մը — Անտանտը (Համաձայնութեան պետութիւններու խմբակցութիւնը), զոր կ'ատեն կատաղաբար եւ որու դէմ — մասնաւորապէս Անգլիոյ դէմ — պատրաստ են մղելու օրհասական կռիւ:

Երկու ոյժերը արդէն իսկ որոշ համաձայնութեան մը եկած էին 1922-ին Ռապալլօի մէջ: (Ջենովայի հռչակաւոր Սորհրդաժողովի միջոցին): Եւ այնուհետեւ ամէն ոք կը կարծէր, թէ օր մը կրնայ դուրս գալ ոռուս-գերման ռազմական զինակցութիւնը, Գերմանիան տըրամադրելով իր տեխնիկայի ու ռազմագիտութեան հսկայ պաշարը, իսկ Ռուսաստանը՝ մարդկային նիւթը: Այդպէս ալ յաճախ գերմանացիք կ'որակեն Ռուսաստանը Menschenmaterial:

ԼՈՒՔԱՐՆՈՅԻ ԴԱՇԻՆՔԸ

Այսօր, իրաւ է, այդ զինակցութեան հաւանականութիւնը մեծապէս թուրացած է Լոքաւոյի դաշնագրով: Առաջին անգամը Ջինադադարէն ի վեր, երկար տարիների ապարդիւն կոնֆերանսներէն ու բանակցութիւններէն յետոյ, Եւրոպայի մեծ պետութիւնները համաձայնուեցան Գերմանիոյ հետ մէկ ընդհանուր բանաձեւի շուրջ:

Այդ բանաձեւով Անգլիան այսուհետեւ Իտալիոյ հետ միասին պիտի խաղայ իրաւարարի դեր երկու թշնամի դրացիներու միջեւ — Գերմանիայի եւ Ֆրանսայի — որոնք 1870-էն ի վեր մշտնջենաւոր լարման ու վտանգի մէջ կը պահէին դիւանագիտական կացութիւնը եւ եւրոպական խաղաղութիւնը: Անգլիան կը միտուի երկու հինաւուրց եւ յիսերիմ հակառա-